# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 50 - 51 (16348) ՇԱԲԱԹ, 18 ՀՈՒԼԻՍԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵՏՐԻ


ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

## «ԲԱԺԱՆԱՐԱՐ ՆՈՐ ԳԾԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՆՈՐ ՄԵՏՐՆ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է»

### ՎՐԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԵՂԱԴՐՈՒՄ Է ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՄԵՋ

*Վրաստանը Ռուսաստանին մեղադրում է Ցխինվալիի տարածաշրջանում սահմանների տեղափոխման մեջ: Ցխինվալիի տարածաշրջանում՝ սահմանի բաժանարար գծի տեղափոխմամբ դեպի վրացական Ծիթելուբանի, Խուրվալետի եւ Օրչոսանի գյուղերի տարածքների խորքերը, «Բաքու-Սուփսա» նավթամուղի մի շարք հատվածներ (մոտ՝ 16 կիլոմետր) դուրս են մնացել Վրաստանի իշխանության վերահսկողության գոտուց:*



*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, մեկնաբանելով Ցխինվալիի տարածա,րջանի ուղղությամբ վարչական սահմանի երկայնքով ստեղծված իրավիճակը, հայտարարեց, որ Վրաստանի տարածքում եւ հատկապես ռազմավարական օբյեկտի մոտ բաժանարար գծի յուրաքանչյուր նոր մետրն անընդունելի է:*

«Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացու եւ ինձ համար անընդունելի է ինքնիշխան տարածքում բաժանարար գծի յուրաքանչյուր նոր մետրը՝ հատկապես, երբ այդ գիծն անցնում է արտակարգ նշանակության օբյեկտի մոտով: Չնայած ստեղծված իրավիճակին՝ Վրաստանը կպահպանի տարանցիկ երկրի գործառույթը: Եվ որպես տարանցիկ երկիր՝ Վրաստանի կշարունակի գործառույթի իրականացումը: Այդ գործառույթը կզարգացնենք այնքան արդյունավետորեն, որ այն չի նվազեցվի, ընդհակառակը՝ է՛լ ավելի կուժեղացվի ապագայում»,- հայտարարեց Մարգվելաշվիլին:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

## ԲԱՐՁՐԱԼԵՌ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾՆ ԸՆԴՈՒՆՎԵԾ

*Հուլիսի 17-ին, Վրաստանի խորհրդարանն երրորդ ընթերցմամբ ընդունեց բարձրալեռ տարածաշրջանների զարգացման վերաբերյալ օրինանախագիծը:*

Կառավարության օրենսդրական նախաձեռնությունը նախատեսում է բարձրալեռ տարածաշրջանների համար հարկային եւ սոցիալական մի շարք արտոնություններ ու նպատակային ծրագրեր: Մասնավորապես, օրենքը կարգավորում է բարձրալեռ բնակավայրերի կարգավիճակը, բարձրալեռ տարածաշրջաններում մշտական բնակչի կարգավիճակի շնորհման եւ վերացման կարգը, ներառում է բարձրալեռ բնակավայրերի ցուցակը, որը հաստատվել է կառավարության կողմից, բարձրալեռ տարածաշրջանների զարգացման հիմնադրամի ձեւակերպումը, ինչպես նաեւ բարձրալեռ տարածաշրջանների ազգային խորհրդի հիմնումը, որը կմշակի երկրամասի զարգացման գործողության ծրագրի եւ մյուս անհրաժեշտ նախագծերը:

Բարձրալեռ տարածաշրջանների զարգացման մասին օրենքը ուժի մեջ կմտնի 2016 թվականից: Ինչպես հայտարարեց մեծամասնական պատգամավոր Զաքարիա Քուցնաշվիլին, վարչապետի հետ պայմանավորվածությամբ, օրինանախագծում գրանցված բոլոր արտոնությունները կսկսեն գործել հաջորդ տարվանից: «Մենք հանդիպում ունեցանք վարչապետի հետ: Իրակլի Ղարիբաշվիլին լրիվ աջակցություն հայտնեց՝ 2016 թվականից ուժի մեջ կմտնեն բոլոր հարկային արտոնությունները, որոնք նախատեսված են օրինանախագծով»,- հայտարարեց Քուցնաշվիլին:

ԻՐԱՎԱԿԱՆ

## ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ԱՆՁՆԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՆԵՐԴՆՈՒՄ ՉԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԻ»

*«Պալիտրա TV» հեռուստաեթերին տված հարցազրույցում, Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, մեկնաբանելով 100 հազար ստորագրությամբ վավերացրած դիմումի պահանջը, հայտարարեց, որ Վրաստանում անձնական այլընտրանքային վկայականի ներդնում չի իրականացվի:*



Ինչպես նշեց նախարարը, փաստաթղթի անվտանգությունը Եվրամիության հետ անայցեգրային պայմանագրային անցման հարցում Վրաստանին տրված տնային հանձնարարություններից մեկն է: «Ներկա դրությամբ, այլընտրանքային վկայական չի ներդրվի: Դա կամայականություն չէ, մենք հնարավորինս պետք է կարգավորենք անձնական վկայականները, եթե մենք ցանկանում ենք ընթանալ եվրաինտեգրման ուղիով: Գուցե հաջորդ նախարարը այդ հարցը լուծի, սակայն քանի դեռ նախարարը ես եմ, ես իրավունք չունեմ կատարելու քայլեր, որոնք կարգելակեն եվրաինտեգրման գործընթացին: Առաջին թեման վերաբերում է փաստաթղթերի անվտանգությանը, դա այն թեման է, որը համարվում է լրիվությամբ կատարված եւ Ռիգայի գագաթաժողովում մեզ ասացին, որ, Արեւմտյան Եվրոպայում այլ երկրների համեմատությամբ, մեզ մոտ գործերի դրվածքը ավելի լավ է: Մեզ մոտ գործող անձնական վկայականները կեղծել հնարավոր չէ:»,- հայտարարեց Թեա Ծուլուկիանին:

## «ՄԵՆՔ ԱՊԱՑՈՒՑԵԼ ԵՆՔ, ՈՐ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ»



Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին արձագանքելով բռնազավթման գոտում զարգացող իրադարձություններին,

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԲՈԼՈՐ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ԿԱՏԱՐՎԵԼ ԿԱՄ ԿԱՏԱՐՎՈՒՄ ԵՆ»

*Բիձինա Իվանիշվիլու եւ «Վրացական երազանք» կոալիցիայի կողմից տրված գրեթե բոլոր խոստումներն աստիճանաբար կատարվել կամ կատարվում են: Այդ մասին «20/30» հեռուստահաղորդման եթերում հայտարարեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:*

Նա անդրադարձավ այն նախագծերին ու ծրագրերին, որոնք իրականացվել են իշխանափոխու-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

## ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐԱՑՎՈՒՄ Է

*Հուլիսի 16-ին Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին հանդիպում է ունեցել աշխատանքային այցով Վրաստանում գտնվող Հայաստանի պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանի հետ:*

Հանդիպման ժամանակ կողմերը քննարկեցին համագործակցությանն առնչվող հարցեր: Վրաստանի պաշտպանության նախարարը նշեց, որ հայկական կողմի հետ երկկողմ համագործակցության առաջնային ուղղություններից մեկը լինելու է ռազմական կրթությունը: «Բրյուսելում ես հնարավորություն ունեցա հանդիպելու իմ հայաստանյան գործընկերոջ հետ եւ պայմանավորվածություն ձեռք բերեցինք հաստատելու համագործակցության նոր ուղիներ եւ հարաբերությունների նոր ձեւաչափեր: Այս այցը նպատակ է հետապնդում խորացնել համագործակցությունը մեր ռազմական ուսումնական հաստատությունների միջեւ՝ փորձի եւ գիտելիքների փոխանակման նպատակով»,- նշեց Թինա Խիդաշելին:

Կողմերը կարծիքներ փոխանակեցին նաեւ տարածաշրջանում վերջին զարգացումների վերաբերյալ:



Հանդիպման ավարտին Դավիթ Տոնոյանը Վրաստանի պաշտպանության նախարարին փոխանցեց Հայաստան այցելելու Հայաստանի պաշտպանության նախարարի հրավերը:

* * *

***Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը դեսպանատանը հանդիպում ունեցավ եւ զրուցեց Թբիլիսիում գտնվող ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանի եւ նրան ուղեկցող պատվիրակության անդամների հետ:***

ԴԻՍԱԿՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

# «ՄԵՆՔ ԱՊԱՑՈՒՑԵԼ ԵՆՔ, ՈՐ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հայտարարեց. «Ինչ վեաբերում է այսպես կոչված բռնազավաթման գոտուն, այնտեղ ընթացող սադրիչ գործողություններին, ապա կրկին անգամ ցանկանում եմ քաղաքագետներին կոչ անել պատասխանատվությամբ մոտենան նման հարցերին: Մենք հնարավոր ամեն ինչ անելու ենք, որպեսզի պահպանենք երկրի կայունությունը եւ ոչ մի ուժի, ոչ մեկին չտանք հնարավորություն տարածաշրջանում իրավիճակի սրման համար: Դա այն չհիմնավորված քաղաքականության արդյունքն է, որն տարիներ շարունակ իրականացնում էր Սաակաշվիլին: Դա 2008 թվականի պատերազմի արդյունքն է, որը շուրջ 25 հազար նոր փախստականներ, 100-ից ավելի կորցրած գյուղեր եւ տարածքային լրացուցիչ կորուստներ բերեց: Դա այն ծանր ժառանգությունն է, որի հետ ընդհարվել ենք եւ արդեն երրորդ տարի է, ինչ փորձում ենք կարգավորել»,-հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին եւ հավելեց. «Մենք առավելագույն զգույշ եւ կոնստրուկտիվ քաաքականություն ենք վարում, սակայն երբեք չենք հաշտվի մեր տարածքների բռնազավթման հետ: Սա մեր սկզբունքային դիքորոշումն է, ինչը երբեք չի փոխվի: Մենք ոչ մի գնով զիջման չենք գնա այնպիսի հարցերի շուրջ, որոնք կվերաբերվեն մեր Աբխազիային եւ Սամաչաբլոյին: Թեպետ դա երկարատեւ գործընթաց է, քանի որ տարիների ընթացքում կուտակված հիմնախնդիրները ժամանակին, խելամիտ քաղաքականությամբ պետք է կարգավորվեն եւ ոչ թե անպատասխանատվությամբ, զգայականորեն, անիմաստ գոռգորոցով եւ աղմուկով»:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին նաեւ հայտարարեց, որ պետք չէ ավելորդ խուճապ տարածել Ցխինվալիի տարածաշրջանի վարչական սահմանին սահմանային նոր ցուցանակների տեղադրման կապակցությամբ:

«Ցուցանակների տեղակայումը կարելի է գնահատել որպես սադրանք եւ բացարձակապես չարդարացված քայլ: Վրաստանը մտադիր է կառուցողական երկխոսության ճանապարհով կարգավորել Ռուսաստանի հետ հարաբերությունները:

Վրաստանի իշխանություններն արդեն իսկ հայտարարել են, որ ավելի քան երկուսուկես տարում իրենց գործողություններով ապացուցել են, որ ցանկանում են Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորում: Մենք կարող ենք դրան հասնել կառուցողական երկխոսության ճանապարհով, խաղաղության բանակցությունների ճանապարհով:

Ցանկանում եմ բոլորին հանդարտության կոչ անել. պետք չէ ավելորդ խուճապ ու ավելորդ աժիոտաժ: Կառավարությունը տեղյակ է, թե ինչ է անհրաժեշտ անել, եւ մենք նպատակամղված ձեւով, հետեւողականորեն ընթանում ենք մեր ուղով»,- ասաց վարչապետը:

## ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԱՌԹԻՎ




Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղար Պան Գի Մունը մտահոգություն է հայտնել ինքնահռչակ Հարավային Օսեթիայի սահմանագծում վերահսկողության գծի երկայնքով ստեղծված իրավիճակի կապակցությամբ: Նա կողմերին կոչ արեց թույլ չտալ սադրանք եւ բոլոր հարցերը կարգավորել գործող մեխանիզմների շրջանակներում, մասնավորապես Ժնեւում անցկացվող միջազգային բանավեճերի եւ հնարավոր միջադեպերի կանխման մեխանիզմների միջոցով:

Վերահսկողության գծում ստեղծված լարված իրավիճակի կապակցությամբ մտահոգություն է հայտնել նաեւ Եվրոպայի խորհրդարանական ասամբլեայի խորհրդի նախագահ Անն Բրասերը: Հատուկ տարածված հայտարարությունում Բրասերը նշում է, որ Ռուսաստանի զինուժի կողմից իրականացվող այդ գործողությունը հղի է լուրջ վտանգով: Նա առանձնապես տագնապալից է համարում այն հանգամանքը, որ սադրիչ գործողություններն իրականացվում են տարածաշրջանի համար տնտեսական մեծ նշանակություն ունեցող Բաքու-Սուփսա նավթամուղի մոտակայքում: «Ասամբլեան հետեւողականորեն իր աջակցությունն է հայտնում Վրաստանի ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության հարցում: Կրկին նշում ենք, որ վարչական սահմանների ցուցանշումը հակասում է միջազգային իրավունքին եւ ծառայում է իրավիճակի սրմանը»,- նշված է Անն Բրասերի հայտարարությունում:

Վրաստանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Նորլանդը դատապարտեց բռնազավթված



գոտին Վրաստանի տարածքի խորքը տեղափոխելու ռուսական զինվորականների գործողությունը: «Իրավիճակը նույնն է, ինչպես դա տեղի էր ունենում, թեպետ դա Վրաստանի նկատմամբ սադրանքի ու նվաստեցման փորձ է: ԱՄՆ-ի եւ միջազգային հանրության դիրքորոշումն անփոփոխ է, այսինքն՝ մենք պաշտպանում ենք Վրաստանին ու բացահայտորեն հայտարարում, որ դա անկախ Վրաստանի տարածքն է»,- հայտարարեց Ռիչարդ Նորլանդը:

## ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ ԵՆ ՍՈՂԱՑՈՂ ԲՌՆԱԶԱՎԹՈՒՄԸ




Վրաստանի արտաքին գործերի նախարարությունն անհանգստություն է հայտնել Գորիի շրջանում տեղադրված ցուցանակների կապակցությամբ, որոնք նախանշում են օկուպացված Ցխինվալիի տարածաշրջանի սահմանը: Հայտարարության մեջ նշվում է, որ, այսպես կոչված, սահմանային ցուցանակների տեղափոխման արդյունքում Վրաստանի վերահսկողության տարածքից դուրս է մնում Բաքու-Սուփսա խողովակաշարի որոշակի հատվածը:

Հուլիսի 14-ին վրաց լրագրողները անցկացրին բողոքի ակցիա: Ակցիայի կազմակերպիչների խոսքերով, ռուսները գրեթե մեկ կիլոմետրով խորացել են Վրաստանի տարածք:

Վրացական ԶԼՄ-ների, այդ թվում՝ «Վրաստան» եւ «Գյուրջիստան» թերթերի ներկայացուցիչները Գորիի շրջանի Խուրվալեթի գյուղում անցկացրին «Ո՛չ բռնազավթմանը» գործողությունը: Բռնազավթված տարածաշրջանի մոտակայքում գտնվող այդ բնակավայրում լրագրողներն ապամոնտաժեցին նոր սահմանագիծը ցուցանշող ցուցանակները:

## ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆ ՓԱԿՎԵԼ Է

Վրաց իրավապահները փակել ենի Գորիի մունիցիպալիտետի Օրչոսանի եւ Ծիթելուբանի գյուղեր տանող ճանապարհները: Ներկա դրությամբ, դրանցից կարող են օգտվել միայն տեղի բնակիչները: Սահմանափակումը վերաբերում են նաեւ լրագրողներին: Ինչպես հայտարարեց Վրաստանի ՆԳ նախարարության տեղեկատվական-վերլուծական դեպարտամենտի ղեկավար Շալվա Ենուքիձեն, սույն որոշումն ընդունվել է, ելնելով ստեղծված իրավիճակից:

ՎՐԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ

# ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԲՈՂՈՔՈՒՄ Է ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՔԱՆԱԿԻ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ, ԻՍԿ ՎՐԱՍՏԱՆԸ ԱՎԵԼԱՑՈՒՄԸ՝ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄ Է ՀԱՄԱՐՈՒՄ

Ռուսաստանի ԱԳ փոխնախարար Գիորգի Կարասինի հայտարարությամբ, Վրաստանը թույլ չի տալիս Ռուսաստանին ավելացնել Թբիլիսիում Շվեյցարիայի դեսպանության առընթեր ռուսական շահերի բաժնի անձնակազմի թվաքանակը: «Մենք էականորեն ընդլայնել ենք մասնավոր կամ ընտանեկան գործերով, ինչպես նաեւ հումանիտար, մարզական, մշակութային եւ գործնական կապերով Ռուսաստան մեկնող Վրաստանի քաղաքացիներին այցեգրերի հանձնումը: Միջինը՝ տարեկան ներկայումս ձեւակերպվում է շուրջ 25 հազար այցեգիր: Կարելի էր ձեւակերպել ավելին, սակայն Թբիլիսիում մեր շահերի բաժնի անձնակազմի շատ փոքր քանակությունը ի վիճակի չէ հաղթահարելու լրացուցիչ աշխատածավալը»,- հայտարարել էր Կարասինը:

Իր հերթին, պաշտոնական Թբիլիսին հերքում է Մոսկվայի մեղադրանքն աշխատակիցների թվակազմի ավելացման կապակցությամբ: Ինչպես նշեց Վրաստանի ԱԳՆ խոսնակ Դավիթ Սաղվարելիձեն, այցեգրերի հարցերով աշխատակիցների թվաքանակությունը լիովին բավարար է: «Տվյալ պարագայում խոսքը վերաբերում է հավասարակշռության խախտմանը: Վրաստանն ունի վեց աշխատակից, իսկ Ռուսաստանը՝ տասը: Թվային գերազանցությունը Ռուսաստանի կողմն է, ուստի վրացական կողմը անձնակազմի ավելացումը չի ողջունում»,- հայտարարեց Սաղվարելիձեն:

Հիշեցնենք, որ Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների խզումից հետո, 2008 թվականի վերջին Շվեյցարիան դարձավ միջնորդ վրաց-ռուսական հարաբերություններում: Թբիլիսիում եւ Մոսկվայում շվեյցարական դեսպանություններին առընթեր գործում են ռուսական եւ վրացական շահերի բաժիններ:



ՈՒԿՐԱԻՆԱ

### ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Ուկրաինայի նախագահ Պյոտր Պորոշենկոն Գերագույն ռադայի քննարկմանն է ներկայացրել Սահմանադրությունում ուղղումներ մտցնելու նոր նախագիծը: Ուկրաինայի Սահմանադրությունում փոփոխությունների նախագիծը չի նախատեսում ֆեդերալացում եւ Դոնբասի հատուկ կարգավիճակ: Այս մասին, ելույթ ունենալով Գերագույն ռադայի նիստում, հայտարարել է նախագահ Պյոտր Պորոշենկոն:*

*«Ֆեդերալացման ակնարկ անգամ չկա: Ուկրաինան եղել է, կա եւ կլինի ունիտար երկիր: Նախագիծը Դոնբասի ոչ մի կարգի հատուկ կարգավիճակ չի ենթադրում: Վստահ եմ, որ առաջարկված նախագիծը ոչ մի կերպ դուրս չի գալիս Մինսկի համաձայնությունների շրջանակներից»,- ասաց նա:*

*Փաստաթղթի լրամշակված տարբերակը հրապարակվել է խորհրդարանի կայքում:*

ԻՐԱՆ

### ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՍՏՈՐԱԳՐՎԵՑ

*Հուլիսի 14-ին, Վիեննայում, տարիներ շարունակ ընթացող Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ Իրանի ու 5+1 (ԱՄՆ, Չինաստան, Ռուսաստան, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա եւ Գերմանիա) համաձայնագիրը ստորագրվեց: Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, Իրանի նկատմամբ տարիներ շարունակ գործող պատժամիջոցները կթուլացվեն, իսկ դրա փոխարեն Իրանը համաձայնվել է սահմանափակել իր միջուկային ծրագիրը եւ դրա նկատմամբ միջազգային երկարաժամկետ վերահսկողություն սահմանել:*

ՌՈՒՍԱՍՏԱՆ

### ՂՐԻՄԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՑՎԵՑ

*Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը համաձայնել է ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդեւի՝ Ղրիմի հարցերով նախարարությունը վերացնելու առաջարկին, եւ հուլիսի 15-ին ստորագրել է Ղրիմի հարցերով նախարարության վերացման մասին հրամանագիրը:*

*Դմիտրի Մեդվեդեւն առաջարկում է Ղրիմի թերակղզու հետագա ինտեգրումը Ռուսաստանի տնտեսական, քաղաքական եւ իրավական համակարգ հանձնել ՌԴ ֆինանսների նախարարությանը:*

ՀՈՒՆԱՍՏԱՆ

### ԵՎՐԿԻՐԸ ՄՆՈՒՄ Է ԵՎՐԱԳՈՏՈՒՄ

*Հունաստանի վարչապետ Ալեքսիս Ցիպրասը հայտարարեց, որ չի հավատում այն միջոցների արդյունավետությանը, որոնք Եվրոպայի ղեկավարներն առաջարկել են Հունաստանի տնտեսությունը փրկելու համար, բայց պատրաստ է իրագործելու դրանք: Ձեռք բերված համաձայնությունը նա համարել է ծանր, սակայն հայտարարել է, որ դա Հունաստանի համար միակ միջոցն է մնալու եվրագոտում:*

*Ֆինանսական օգնության՝ ընդունված պլանը տակավին պետք է հաստատում անցնի երկրի խորհրդարանում, որտեղ Ցիպրասին դյուրին պայքար չի սպասվում կուսակցության գծով զինակիցների հետ: Չնայած Հունաստանում նրա քաղաքականությունից աճող դժգոհությանը, վարչապետը հայտարարել է, որ մտադիր չէ պաշտոնաթող լինել:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԲՈԼՈՐ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ԿԱՏԱՐՎԵԼ ԿԱՄ ԿԱՏԱՐՎՈՒՄ ԵՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյունից հետո ընկած ժամանակահատվածում: Վարչապետի խոսքերով, խոստումները նախատեսված էին չորսամյա կառավարման ժամկետի համար եւ դրանց կատարումը շարունակվում է:

«Տարիներ շարունակ կուտակվել էին հիմնախնդիրներ, որոնք երկրում սոցիալական ծանր ֆոն էին ստեղծում: Այդ ուղղությամբ նախկին իշխանության կողմից գործուն քայլեր չեն կատարվել: Մեր կառավարության գալու առաջին իսկ օրվանից Բիձինա Իվանիշվիլու նախաձեռնությամբ, սկսեցին իրականացվել գործուն քայլեր: Առաջին իսկ տարում մենք սկսեցինք ֆինանսավորել էժան ագրովարկերի ծրագիրը, որի շրջանակներում ստեղծվեցին 153 նոր արտադրություններ, որի շնորհիվ կազմվեցին հազարավոր աշխատատեղեր: Բացի այդ, վերակարգավորվել են 600 ձեռնարկություններ: Ընդհանուր առմամբ, գյուղատնտեսական ոլորտի համար ծախսվել է շուրջ 1 միլիարդ լարի: Սրանք այն խոստումներն էին, որոնք տրվել էին ընտրություններից առաջ Բիձինա Իվանիշվիլու եւ «Վրացական երազանքի» կողմից, եւ մենք հասել ենք կոնկրետ արդյունքների»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Վարչապետի խոսքերով, կառավարության գլխավոր առաջնահերթությունն երկրում առկա բոլոր ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումն է:

ՆՈՐ ԿԱՌՈՒՅՑ

## ՍՏԵՂԾՎՈՒՄ Է ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

***Վրաստանի խորհրդարանն երրորդ ընթերցմամբ եւ վերջնականապես ընդունեց «Պետական անվտանգության ծառայության մասին» օրինագիծը եւ դիտարկեց դրա հետ կապված օրենսդիր ակտերը:***

Կառավարության օրենսդրական նախաձեռնությունը, որը նախատեսում է ներքին գործերի նախարարության մասնատում եւ պետանվտանգության առանձին ծառայության ստեղծում, խորհրդարանին ներկայացրել էր ներքին գործերի փոխնախարար Լեւան Իզորիան:

Օրինագծին համապատասխան՝ օգոստոսի 1-ից ստեղծվում է Պետական անվտանգության ծառայություն, որը լինելու է կառավարությանը ենթակա հատուկ նշանակության հիմնարկ: Նոր ծառայությունն ունենալու է երկու հիմնական գործառույթ. իր իրավասության ներքո գտնվող հանցանքների հայտնաբերում, կանխում ու հետաքննում, ինչպես նաեւ ակնկալվող սպառնալիքների, ռիսկերի ու մարտահրավերների հայտնաբերում:

Պետանվտանգության ծառայությունը զբաղվելու է օտար երկրների հատուկ ծառայությունների ու առանձին անձանց հակաիրավական գործողություններից Վրաստանի սահմանադրական կարգի, ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, գիտատնտեսական ու ռազմական պոտենցիալի պաշտպանությամբ:

Պլանավորված բարեփոխումների շրջանակներում՝ Պետանվտանգության ծառայության կազմում ընդգրկվելու են հակահետախուզության դեպարտամենտը, հակահետախուզական կենտրոնը, հակակոռուպցիոն գործակալությունը եւ հատուկ գործողությունների դեպարտամենտը (այսպես կոչված՝ «Շավնաբադա» ստորաբաժանում):

Նշենք, որ հուլիսի 15-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ստորագրեց ներքին գործերի նախարարության բարեփոխման մասին օրենքը, ըստ որի՝ գերատեսչության կազմից առանձնացվում է անվտանգության ծառայությունը:

ԳՈՐԾԱԴԻՐ

## ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ՝ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ



***«Գոտիների ծգման» քաղաքականության ֆոնի վրա կառավարությունը գործարարների համար ներդնում է նորանոր կարգավորումներ: Դրանցից է, մասնավորապես, ոչ ալկոհոլային խմիչքների պիտակավորման համակարգը:***

Վերջին հինգ տարիների ընթացքում գործարարները դեմ էին հանդես գալիս նորամուծությանը, սակայն այն արդեն ընդունվել է եւ առաջիկա ամիսներին օրենքը կմտնի ուժի մեջ:

Որպես հիմնավորում, Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին ներկայացրեց հարեւան երկրների, մասնավորապես, Հայաստանի օրինակը, որտեղ ակցիզով հարկադրված են ոչ միայն ալկոհոլային, այլեւ ոչ ալկոհոլային խմիչքները՝ ջուրը, հյութերը, կոկա-կոլան եւ այլն:

Ինչ վերաբերում է նոր համակարգի ներդրման հետ կապված ծախսերին, ապա այն ստանձնում է պետությունը:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, գործարարների հետ հանդիպումից հետո, ֆինանսների նախարարին հանձնարարեց հետաձգել ոչ ալկոհոլային խմիչքենրի պարտադիր պիտակավորման ներդրումը: Վարչապետի առաջարկությամբ պարտադիր պիտակավորումն ընթացիկ տարվա սեպտեմբերի մեկի փոխարեն կներդրվի նոյեմբերի մեկից:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿՈՂՄԻ ՀԵՏ

***Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին Փարիզում պայմանագիր է ստորագրել հրթիռային համակարգերի եվրոպական առաջատար մշակող եւ արտադրող ֆրանսիական MBDA ընկերության հետ:***

Պայմանագիրը ուժի մեջ է եւ կսկսվի իրագործվել հունվարի 1-ից: Թինա Խիդաշելու խոսքերով, դա ֆինանսապես շատ հաջող պայմանագիր է, եւ ֆրանսիացիներն իրենց նկատմամբ անսովոր մեծահոգություն են ցուցաբերել: Դա եղել է Ֆրանսիայի քաղաքական կամքը, իրեն հավատարիմ գործընկերոջ՝ Վրաստանի նկատմամբ:

Համապատասխան Ֆրանսիայի հետ կնքած գաղտնի համաձայնությունների՝ Վրաստանը ձեռք է բերում հակաօդային պաշտպանության համակարգեր:

Նշենք, որ ֆրանսիական կողմի հետ առաջին պայմանագիրը կնքվել է 2015 թվականի հունիսին Լե Բուրժեի ավիացիոն ցուցահանդեսի շրջանակներում:

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու հետ հանդիպման ժամանակ Վրաստանի պաշտպանության նախարության եւ զինված ուժերի գլխավոր շտաբի ղեկավարները նրան են ներկայացրել մանրամասն տեղեկատվություն օդային անվտանգության եւ վրաց-ֆրանսիական համաձայնությունների մասին:

Իր հերթին, պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին նշել է, որ «Վրաստանի պաշտպանունակությունը այժմ դառնում է ավելի կայուն, ուժեղ եւ ՆԱՏՕ-ի հետ համատեղելի, քան երբեւէ՝ դառնալով միջազգային պաշտպանունակության համակարգի մաս»:

ՀՐԱԶԵՆ

## ՊԱՏՐԱՍՏՎԵԼ Է «ՍԱԹԵՎԱՐԻ» ԴԻՊՈՒԿԱՀԱՐ ՀՐԱՑԱՆ

***Վրացական «Դելտա» ռազմական գիտատեխնիկական կենտրոնը մշակել է նոր տիպի «Սաթեվարի» դիպուկահար հրացան: Այդ մասին հայտարարել է «Դելտայի» մամլո ծառայության ղեկավար Գիգա Ինաշվիլին:***

Զենքը բազմատրամաչափ է, դրա համար կարող են պիտանի լինել հետեւյալ զինատեսակների փողերը՝ 308 Winchester, 300 WM, 300 Normal Magnum, 338 LM, 338 GBM, 375 GBM, 50 BMG: Այն կարող է օգտագործվել՝ ինչպես ռազմական, այնպես էլ մարզական նպատակներով: «Սաթեվարի» հին վրացական խոսք է, որով անվանվել է սրի տեսակներից մեկը: Մենք այն մշակել ենք մեր նախաձեռնությամբ: Զենքը կարող ենք հրամցնել՝ ինչպես Վրաստանի պաշտպանության նախարարությանը, այնպես էլ մասնավոր պատվիրատուներին»,- հայտարարեց Գիգա Ինաշվիլին:

Զենքը տարբերվում է կրակոցի ճշգրտության հեռահարության պլանում: 338 GBM-ի ու 375 GMB-ի տիպի փողերի դեպքում փամփուշտը կարող է հաղթահարել 1800 մետր, 300 Normal Magnum-ի դեպքում՝ 1400 մետր, 338 LM-ի դեպքում՝ 1200 մետր, իսկ ահա 50 BMG-ի դեպքում՝ 2500 մետր: Ամենափոքր հեռահարությունը 308 Winchester-ի պարագայում է՝ 800 մետր:



«Դելտա» կենտրոնում ընդգծել են, որ «Սաթեվարին» ներկայումս փորձարկումներ է անցնում, որոնց ավարտից հետո այն պատրաստ կլինի շահագործման:



### ԲԱՑՎԵՑ ՆՈՐ ՄԱՐԶԱՊԱԼԱՏ

*Թբիլիսիում տեղի ունեցավ նոր մարզապալատի բացման արարողությունը: Թբիլիսիի պետական համալսարանի բարձրահարկ մասնաշենքի մոտակայքում գտնվող մարզապալատի բացմանը ներկա էին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին եւ սպորտի ու երիտասարդության գործերով նախարար Տարիել Խեչիկաշվիլին:*

*«Մի քանի օր անց Թբիլիսիում կմեկնարկի եվրոպական երիտասարդական օլիմպիական փառատոնը: Դա այն ամենախոշոր մարզական միջոցառումն է, որի նմանը Թբիլիսիում երբեք չի անցկացվել: Այս մարզապալատը հագեցված է անհրաժեշտ բոլոր ենթակառույցներով: Նշեմ, որ մարզապալատի շինարարությունը մենք սկսեցինք հունվարին եւ ավարտեցինք վեց ամսվա ընթացքում: Սա կառավարության նվերն է մեր մարզիկներին»,- բացմանը հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:*

### ՀԱՍՏԱՏՎԵՑ ՆՈՐ ԴԵՍՊԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ



*Միացյալ Նահանգների Սենատը Վրաստանում այդ երկրի արտակարգ եւ լիազոր դեսպանի պաշտոնում հաստատել է պրոֆեսիոնալ դիվանագետ Յան Քելլիի թեկնածությունը: Այդ պաշտոնում նա կփոխարինի Ռիչարդ Նորլանդին, որը եռամյա գործունեությունից հետո ավարտեց իր աշխատանքը Թբիլիսիում: Քելլին տիկնոջ հետ ծրագրում է Թբիլիսի ժամանել ընթացիկ տարվա սեպտեմբերին:*

*Արհեստավարժ դիվանագետ Յան Քելին աշխատել է ԵԱՀԿ-ում ԱՄՆ-ի ներկայացուցչությունում, գլխավորել պետական դեպարտամենտի հասարակական գործերի բյուրոն, Ռուսաստանի եւ Եվրոպայի ու Եվրասիայի գործերով բյուրոները: Աշխատել է Իտալիայում եւ Թուրքիայի ԱՄՆ-ի դեսպանություններում: Տարբեր պաշտոններ է զբաղեցրել Ավստրիայում, Սերբիայում, նախկին Խորհրդային Ավստրիայում ո ւ Իտալիայում ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցչություններում:*

### SOCAR-Ը ՏՈՒԳԱՆՎԵԼ Է

*Ադրբեջանի պետական նավթային ընկերության (SOCAR) OOO SOCAR Georgia petroleum ընկերությունը տուգանվել է Վրաստանի օրենսդրությունը խախտելու համար:*

*Վրաստանի մրցակցության գործակալության կողմից ավտոմոբիլային վառելիքի (բենզին, դիզելային վառելիք) ապրանքային շուկայի հետազոտության արդյունքներով հայտնաբերվել են «Մրցակցության մասին» Վրաստանի օրենքի խախտման փաստեր:*

*Այդ մասին գործակալության հաղորդագրության մեջ ասվում է, որ հետազոտության արդյունքներով համապատասխան գործակալները պարտավոր են վճարել մինչեւ 55 մլն լարի (25 մլն դոլար):*

*Օրենսդրությունը խախտած ընկերությունների ցուցակում նշված է նաեւ OOO SOCAR Georgia petroleum ընկերությունը, որը տուգանվել է՝ 14 381 385 լարի:*

### ԶՈՀԵՐ՝ ԳԱԶԻ ԱՐՏԱՀՈՍՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

*Թբիլիսիի Գլդանի թաղամասում բազմաբնակարան շենքի 5-րդ հարկի բնակարաններից մեկում հզոր պայթյունի հետեւանքով 5 մարդ է զոհվել:*

*Պայթյունը տեղի է ունեցել բնական գազի արտահոսքի պատճառով: Պայթյունի հետեւանքով շենքի բնակելի հատվածի մի մասը փլուզվել է, մնացած մասերում կոտրվել են լուսամուտների ապակիները:*

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՓՈՍՏԻՑ

# ԿԱ ՄԻ ՄԱՐԴ, ՈՐԻ ՄԱՍԻՆ ՄԻՇՏ ԷԼ ԳՈՎԵՍՏԻ ԽՈՍՔԵՐ ԿԱՐԵԼԻ Է ԱՍԵԼ

Տարիներ շարունակ այն տպավորությունն է եղել գյուղի եւ գյուղացու հոգեբանության մեջ, թե անուշադրության են ենթարկված ղեկավարության կողմից:

Սակայն արի ու տես, որ դա միշտ այդպես էլ չէ:

Կա մարդ, որի մասին միշտ էլ կարելի է գովեստի խոսքեր ասել: Իսկ եթե կուզես այդ մարդու մասին խոսել, ուրեմն դու պետք է անցնես այն ճանապարհը, որով անցել է մեր Հենզել Մկոյանը, անձնավորություն, ով ոչ մի ջանք ու եռանդ չի խնայել ու խնայում Նինոծմինդայի շրջանի եւ նրա բոլոր գյուղերի համար: Հատկապես ես ուզում եմ գրել այն ամենի մասին, ինչ նա արել է եւ անում է մեր գյուղի՝ Գանձայի համար: Նրա առաջին աշխատանքն է եղել Վ.Տերյանի անվան դպրոցի ներքնահարկի մաքրման աշխատանքը իր սեփական միջոցներով 48-50 մեքենա աղբ է տեղափոխել: Սակայն այնքան շատ է նրա կատարածը գյուղի համար, որ չգիտեմ որ մեկը թվեմ: Գյուղում տեղադրեց տեղական անտենան, որ գյուղն անմիջական կապ ունենա շրջկենտրոնի հետ: Ունեինք հիվանդանոց, սակայն առանց ջրի, որն անմիջապես անհրաժեշտություն էր: Լուծվեց ջրի հարցը:



Ամեն տարի իր սեփական ֆինանսի հաշվին օգնություն է ցույց տալիս անապահով ընտանիքներին: Գյուղից մի քանի տասնյակ անվճար բուժումներ, օպերացիաներ են արվել Թբիլիսիում, Ախալցիխեում, Ախալքալաքիում: Գույքով ու կահույքով օժանդակել է երկու դպրոցներին՝ հեռուստացույց, համակարգիչ եւ այլն:

Երկար տարիներ գանձացիները չգիտեին եւ չէին պատկերացնում, որ տներում կարող են ունենալ ջրի ծորակներ: Այսօր համարյա ամեն ընտանիքում հոսում է սառնորակ աղբյուրների ջուրը: Բավականին էժան գնով ունենք բնական գազ, դա էլի պարոն Մկոյանի շնորհիվ:

Գանձան լինելով մեծ, բնակչության քանակով շատ, տարիներ շարունակ չուներ հարսանյաց տուն: Կառուցվեց հարսանյաց տունը՝ իր բոլոր հարմարանքներով:

Մենք բոլորս էլ լավ ենք հասկանում, որ գյուղացու աշխատանքը բավականին ծանր է: Ուստի գյուղի ժողովուրդը հանգստի կարիք ունի: Այս հարցով նույնպես մտահոգվեց Վրաստանի խորհրդարանի մեր պատգամավոր Հենզել Մկոյանը: Վերանորոգվեց մշակույթի տան կտուրը, հիգիենական սենյակները: Մոտ օրերս մշակույթի տունը կստանա նախատեսված 300 թանկարժեք աթոռներ: Ասեմ նաեւ, որ կենտրոնական փողոցները լուսավորվեցին, իսկ քանի որ գյուղի մի փոքր մասը առայժմ ջուր չունի, արդեն սկսվում է 50 տոննանոց տարողության կառուցումը: Ծրագրի մեջ է գյուղի կենտրոնական փողոցների ասֆալտապատումը եւ, իհարկե, նույնպես Հենզել Մկոյանի աջակցությամբ: Մոռացա ասեմ, որ կառուցվեց նաեւ բժշկական ամբուլատորիան իր բոլոր հարմարություններով:

Եկեք խոստովանենք, որ նրանից առաջ ընտրված պատգամավորներից, ցավոք սրտի, ոչ մի կոնկրետ օգնություն չէինք տեսել... Մենք վերջին տասնհինգ տարիների ընթացքում, ինչ նա ներկայացնում է մեր շրջանի շահերը երկրի խորհրդարանում, նոր զգացինք նրա հոգատարությունը ժողովրդի նկատմամբ:

Այսքանից հետո, մեր սրտից բխած խոսքերն ենք ուղղում մեր Հենզելին, շնորհավորում նրա 55-ամյակը, մաղթում առողջություն, ուժ, եռանդ, ընտանեկան մեծ երջանկություն:

*ՌՈՒԲԵՆ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ*
*Գանձա գյուղի բնակիչ*

ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔ

# ՍԱՀՄԱՆԱԿԵՏՈՒՄ ԿՀԱՍՏԱՏՎԻ ԳԵՆՈՄՈԴԻՖԻԿԱՑՎԱԾ ՄԹԵՐՔԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԵՏ

***Վրաստանի մաքսային սահմանում կտեղադրվի վերահսկիչ կետ, որը կստուգի երկիր ներբերվող գենոմոդիֆիկացված մթերքը: Ինչպես հայտարարեց Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության աշխատակազմի ղեկավար Խաթիա Մոյիսցրապիշվիլին, եկամուտների ծառայությունը ներկրվող մթերքի վերահսկողությունը կսկսի հունվարի 1-ից:***




«Ողջ գենոմոդիֆիկացված օրգանիզմներ են համարվում այն օրգանիզմները, որոնք ի վիճակի են բազմանալու եւ գեները փոխանցելու: Հիմնականում դա սերմնանյութերն են ու սածիլները, սակայն նախատեսված են մրգերն ու բանջարեղենը, որոնք նույնպես տիրապետում են այդ հատկություններով: Ընթացիկ տարվա հուլիսի 1-ից սկսել է գործել գենոմոդիֆիկացված մթերքների մակնիշավորման մասին օրենքը: Այդ օրենքի հիման վրա մշակվել է Վրաստանի ֆինանսների նախարարի հրամանագրի նախագիծը, գենոմոդիֆիկացված մթերքների նկատմամբ մաքսային վերահսկողության սահմանման վերաբերյալ: Վերահսկողության կենթարկվեն բոլոր մթերքները, որոնք հատում են սահմանը: Դրանք պետք է ունենան հատուկ նշաններ: Դրանց բացակայության դեպքում, համապատասխան փաստաթղթերով պետք է հաստատվի, որ այդ մթերքները չեն պարունակում գենոմոդիֆիկացված օրգանիզմներ, հակառակ դեպքում, նման մթերքները կհայտնվեն ռիսկի խմբում եւ կառաքվեն լաբորատորիա»,- հայտարարեց Խաթիա Մոյիսցրապիշվիլին:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՀՐԱՏԱՊ ԹԵՄԱ

# ԻՆՉՊԵ՞Ս ԵՎ ՈՒ՞Մ ԴԻՄԵԼ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

## «ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՊԵՏԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ» ՏՆՕՐԵՆ ՇԻՌ ԽԵՑՈՒՐԻԱՆԻՆ

***Դատելով «Վրաստանի» փոստից, Վրաստանի քաղաքացիության շնորհման եւ երկրի տարածքում քաղաքացիների կեցության թույլտվության ստացման հարցը շարունակում է մնալ քաղաքացիների ուշադրության կենտրոնում: Հաշվի առնելով սույն հանգամանքը, որոշեցինք անմիջականորեն առաջին աղբյուրից առավել մանրամասն տեղեկատվություն հաղորդել վերոնշյալ հարցի վերաբերյալ: Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում քաղաքացիության եւ կեցության թույլտվության հարցի հետ կապված մեր հարցազրույցը Վրաստանի արդարադատության նախարարության «Պետական սպասարկումների զարգացման գործակալության» տնօրեն Շիո Խեցուրիանու հետ:***

***- Բատոնո Շիո, նախ, ո՞ր հարցերի կարգավորումն է գտնվում Ձեր գլխավորած գերատեսչության իրավասության ներքո:***

- Բոլոր այն հարցերը, որոնց կարելի է միավորել պետություն-քաղաքացի հարաբերությունների շրջանակում: Թեպետ, որպես ինքնին հասկանալի հանգամանք, առաջնահերթությունը տրվում է քաղաքացիության ստացման, քաղաքացիությունից ազատվելու, կեցության թույլտվությունների եւ նման հարցերին, որոնցով էլ իրականացվում է երկրի տարածքում այս կամ այն քաղաքացու գտնվելու, աշխատելու, ապրելու իրավունքը:

***- Այժմ անդրադառնանք թեմային: Ընդհանրապես, ի՞նչ տեսակի կեցության թույլտվություններ են տրվում:***

- Վրաստանում տրվում են աշխատանքային, ուսուցման, ընտանիքի միավորման նպատակով կեցության թույլտվություն, Վրաստանի նախկին քաղաքացու կեցության թույլտվություն: Գործում է նաեւ կեցության հատուկ թույլտվության, մշտական բնակության թույլտվության, ներդրումային կեցության թույլտվության, առանց քաղաքացիության անձանց կեցության թույլտվության, ժամանակավոր կեցության թույլտվության հանձնման պրակտիկան:

***- Եկեք մանրամասենք թույլտվության ստացման մեխանիզմը: Նախ, դրա ստացման համար, ո՞ւմ պետք է դիմել:***

- Վրաստանում կեցության թույլտվության ստացման կամ դրա գործողության ժամկետի երկարաձգման համար պետք է դիմել Վրաստանի արդարադատության նախարարության կառավարման ներքո գործող Հանրային իրավունքի իրավաբանական անձ (ՀԻԻԱ) «Պետական սպասարկումների զարգացման գործակալության» տարածքային ծառայությանը, Արդարադատության տներին եւ հասարակական կենտրոններին:

Կանխելով ձեր հանդիպակած հարցը, նշեմ, որ Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում նման ծառայություններն են՝ Պետական սպասարկումների զարգացման գործակալության Նինոծմինդայի եւ Ախալքալաքիի տարածքային ծառայությունները, Փոկայի հասարակական կենտրոնը, Ախալցիխեի Արդարադատության տունը:

Ավելացնեմ, որ օտարերկրյա քաղաքացիները պարտավոր են Վրաստանում կեցության թույլտվության ստացման խնդրանքով գործակալությանը դիմել Վրաստանի տարածքում օրինականորեն գտնվելու ժամկետի սպառումից 40 օրացուցային օր շուտ:

***- Որպես կեցության թույլտվության ստացման նախապայման այցեգրի առկայությունն է: Հավանաբար, թույլտվություններից յուրաքանչյուրի համար առանձին տեսակի այցեգիր կպահանջվի: Ի՞նչ տեսակի այցեգրեր են անհրաժեշտ կեցության թույլտվության ստացման համար:***

- Դուք իրավացի եք, իրոք, կեցության թույլտվության յուրաքանչյուր տեսակի ստացման համար պահանջվում է այցեգրի որոշակի տեսակը: Այսպես, աշխատանքային կեցության թույլտվության ստացման համար անհրաժեշտ է՝ էմիգրացիոն այցեգիր. D1/D2, ուսուցման կեցության թույլտվության համար՝ էմիգրացիոն այցեգիր. D3, ընտանիքի միավորման նպատակով թույլտվության համար էմիգրացիոն այցեգիր. D4, մշտական բնակության



թույլտվության համար եւս էմիգրացիոն այցեգիր. D4, բացառությամբ այն անձանց, ովքեր Վրաստանում ժամանակավոր կեցության թույլտվության հիման վրա ապրել են վերջին վեց տարվա ընթացքում:

Վրաստանի նախկին քաղաքացիները, ովքեր օրինականորեն գտնվում են Վրաստանում, կարող են առանց համապատասխան տեսակի այցեգրի, ստանալ կեցության թույլտվություն 6 տարվա ժամկետով:

Օտարերկրյա քաղաքացիները, ում Վրաստանի քաղաքացիությունն ընդհատվել է եւ Վրաստանի տարածքից չեն հեռացել, Վրաստանի նախկին քաղաքացիների կեցության թույլտվության ստացման համար չի պահանջվի Վրաստանում օրինականորեն գտնվելը հաստատող փաստաթղթի պատճենի ներկայացումը:

***- Եվս մի կարեւոր հարց, որը վերաբերում է կեցության թույլտվության ստացման ժամկետներին ու սակագնին:***

- Խնդրեմ, եթե ցանկանում ես 10 օրում ստանալ աշխատանքային, ուսուցման, ընտանիքի միավորման նպատակով եւ Վրաստանի նախկին քաղաքացիների կեցության թույլտվություն, հարկ է վճարել 410 լարի, 20 օրում ձեւակերպումներն ավարտելու համար պետք է վճարել 330 լարի, իսկ մեկ ամսում, այսինքն՝ 30 օրում թույլտվության ստացման սակագինը կազմում է 210 լարի:

Մշտական բնակության եւ ներդրումային կեցության թույլտվությունը 20 օրացուցային օրում ստանալու արժեքը կազմում է 300 լարի, իսկ նույն թույլտվությունը 30 օրացուցային օրում ստանալու սակագինը 180 լարի է:

***- Որեւէ տեսակի արտոնություն սահմանվա՞ծ է, արդյոք, կեցության թույլտվություն ստանալ ցանկացողների համար:***

- Իհարկե, մասնավորապես, օտարերկրյա քաղաքացիներից՝ մինչեւ հուլիսի մեկը չէր պահանջվում Վրաստանի այցեգիր կամ կեցության թույլտվություն ունենալը, եթե նրանց վրա տարածված էր Վրաստանում կեցության թույլտվությունը կամ Վրաստան են մուտք գործել 2014 թվականի մարտի 17-ից հետո ու 2015 թվականի փետրվարի 24-ին գտնվել էին երկրի տարածքում:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)